

Եւ Շահին հրամանով Սարուխան անուն մէկը տեղապահ կը դնէ Երեւան, մինչեւ նոր Պանին ժամանումը (12) :

Կաթողիկոսին բացակայութեան ժամանակ, Ռնտիրիոս կը դաւէ ընդդէմ անոր, եւ կը ջանայ գահընկէց ընել զայն եւ դրաւել էջմիածնի Աթօրը: Յակօբ Զուգայեցի՝ որ ուրիշ անգամ ներած էր՝ Ամիթ քաղաքին, Կ. Պոլսոյ եւ էջմիածնի մէջ անոր դործած անհաւատարմութեանց, իրողեկ ըլլալով նորանոր դաւադրութեանց՝ ուրիշ ազերսագիր մը կը ներկայացնէ Շահին խնդրելով կաթողիկոսական ռազամը: «Եւ հրամայեաց Շահն, կ'ըսէ Զաքարիա Պատմիչ, տալ ռազամն եւ զարքունական խիւլայն ըստ սովորութեանն, գեղեցիկ պատմուծան սկենկար եւ դօտի պատուական եւ սամուր վերարկու, եւ գլխոյ զծափ՝ որ է մանտիլ, եւ երիվար գօրեղ: Եւ ի պատիւ երեսաց նորա արար եւ իշխան զՍաֆի Պանըն որ է որդի Ռոստամ Պանին Թաւրիզոյ, եւ առաքեաց յԵրեւան, եւ ի նա յանձնեաց զկաթուղիկոսն»: Հայրապետն ու Պանը կ'երթան Թաւրիզ: Պանը կը փութայ աւելի առաջ հասնիլ Երեւան, ուր երկու օր յետոյ կը ժամանէ նաեւ Կաթողիկոսը եւ Յայտնութեան տօնին կը կատարէ ջրօրհնէքը: Հոն կը կարգացուի Պանին ռազամը, որուն մէջ Շահը կը պատուիրէ նոր Կառավարչին գործել Կաթողիկոսին գիտակցութեամբ եւ

(12) Անդ 82-83: